ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 07

07 օգոստոսի 2024 թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

գ. Փամբակ Ավագանու նստավայր

Նիստը վարում էր համայնքի ղեկավար, ավագանու անդամ Սուրեն Կոստանդյանը:

Նիստն արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Ռաիսա Մինասյանը

Մասնակցում էին՝

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝ Սուրեն Կոստանդյանը, Սամվել Անանյանը, Արայիկ Քոչարյանը, Սերյոժա Սարդարյանը, Գրիգոր Կարապետյանը, Արշակ Սրապյանը, Արմենուհի Ոսկանյանը, Պավլիկ Պապինյանը և Շուշանիկ Հակոբյանը:

«Բարգավաճ Հայաստան» կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝ Թիանա Բոջուկյանը և Նաիրա Հարությունյանը:

Նիստից բացակայում էին՝

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝ Աշոտ Անտինյանը և Էմմա Գասպարյանը:

«Բարգավաճ Հայաստան» կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝ Սասուն Մարանդյանը և Սևակ Խաչատրյանը:

Նիստին ներկա էին վարչական ղեկավարներ, «Մասիս Փլանթ» ՍՊԸ-ի ներկայացուցիչներ, ինչպես նաև ՄԱԿ-ի հայկական ասոցիացիայի կողմից ստեղծված Փամբակ խոշորացված համայնքի «Արմատ» նախաձեռնող խմբի անդամներ:

Նիստն իրավազոր է՝ նիստին ներկա են ավագանու 11 անդամ

ՆԻՍՏԸ - Նիստը վարող Սուրեն Կոստանդյանը ժամը 15:00-ին նիստը հայտարարեց բացված:

Նիստ վարողը ներկայացրեց, որ օրակարգը մնում է անփոփոխ՝ 8 կետ և առաջարկեց հաստատել օրակարգը:

Քվեարկությամբ, կողմ՝ 11 ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 085-Ա/:

Հաստատվեց օրակարգը, ինչով էլ սպառվեց ներկայացված օրակարգի առաջին հարցը.

Հաստատված օրակարգը՝

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու 2024թ-ի օգոստոսի 07-ի թիվ 07 արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին:

զեկ. Ս. Կոստանդյան

2. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի սեփականության գույքագրման փաստաթղթերում կատարված փոփոխությունները հաստատելու մասին:

զեկ. Կ. Շերմազանյան

3. Ձկնաբուծական արհեստական լճակների կառուցման նպատակով սեփականության իրավունքով Արտյոմ Ռուդիկի Սաքանյանին պատկանող հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:

զեկ. Ա. Օհանյան

4. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն ուղղակի վաճառքով Սերոբ Զուլալյանին օտարելու մասին:

զեկ. Ա. Օհանյան

5. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն ուղղակի վաճառքով Արթուր Բեկչյանին օտարելու մասին:

զեկ. Ա. Օհանյան

6. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը Էդիկ Արշալույսի Մկրտչյանին ուղղակի վաճառքով օտարելու մասին:

զեկ. Ա. Օհանյան

7. Փամբակ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերն աճուրդ վաճառքով օտարելուն, վարձակալության և կառուցապատման իրավունքներով տրամադրելուն համաձայնություն տալու, մեկնարկային գները, աճուրդի եվ մրցույթի պայմանները հաստատելու մասին:

զեկ. Ա. Օհանյան

8. Փամբակ համայնքի Քարաբերդի ոսկու հանքավայրի կենտրոնական տեղամասում երկրաբանական ուսումնասիրություն կատարելուն նախնական համաձայնություն տրամադրելու մասին:

զեկ. Ս. Կոստանդյան

ԸՆԹԱՑՔԸ՝

1. ԼՍԵՑԻՆ - Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի սեփականության գույքագրման փաստաթղթերում կատարված փոփոխությունները հաստատելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի առաջատար մասնագետ Կիմա Շերմազանյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ 2024 թվականի մայիսի 27-ից մինչև օգոստոսի 5-ը համայնքի բյուջեով և տարբեր ծրագրերով ձեռք են բերվել 7579750 ՀՀ դրամի հիմնական միջոցներ՝ նախագծին կից ներկայացված ցանկի համաձայն:
Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:
Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:
Քվեարկությամբ, կողմ՝ 11, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 086-Ա/:

2. ԼՍԵՑԻՆ - Ձկնաբուծական արհեստական լճակների կառուցման նպատակով սեփականության իրավունքով Արտյոմ Ռուդիկի Սաքանյանին պատկանող հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին հարցի նախագիծը:
- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Արտակ Օհանյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ հաշվի առնելով Արտյոմ Սաքանյանի հայտը՝ ճարտարապետահատակագծային առաջադրանք տրամադրելու մասին, համայնքի ղեկավարի կողմից տրված նախագծային թույլատրությունը, առաջարկում է Արտյոմ Ռուդիկի Սաքանյանին սեփականության իրավունքով պատկանող 06-010-6001-0003 ծածկագրով 0,181571 հա գյուղատնտեսական հողերի նպատակային նշանակության 5-րդ կարգի խոտհարք գործառնական նշանակության հողամասից 0,09 հա հողամասը՝ ձկնաբուծական արհեստական լճակների կառուցման նպատակով փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողերի գործառնական նշանակության:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:
Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:
Քվեարկությամբ, կողմ՝ 11, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 087-Ա/:

3. ԼՍԵՑԻՆ - Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն ուղղակի վաճառքով Սերոբ Զուլալյանին օտարելու մասին հարցի նախագիծը:
- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Արտակ Օհանյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ հաշվի առնելով Սերոբ Զուլալյանի դիմումը, առաջարկում է տալ համաձայնություն վարձակալության իրավունքով նրան պատկանող, Փամբակ համայնքի Մարգահովիտ բնակավայրի 06-070-0252-0004 կադաստրային ծածկագրով 0,7006 հա մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության, 1-ին կարգի վարելահող գործառնական նշանակության հողամասը նախապատվությամբ՝ ուղղակի վաճառքով նրան օտարելուն: Հողամասի վաճառքի գին

սահմանել կադաստրային արժեքի չափով՝ 1045000 (մեկ միլիոն քառասունհինգ հազար) ՀՀ դրամ:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 11, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 088-Ա/:

4. ԼՍԵՑԻՆ - Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն ուղղակի վաճառքով Արթուր Բեկչյանին օտարելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Արտակ Օհանյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ հաշվի առնելով Արթուր Բեկչյանի դիմումը, առաջարկում է տալ համաձայնություն վարձակալության իրավունքով նրան պատկանող, Փամբակ համայնքի Մարգահովիտ բնակավայրի 06-070-0252-0005 կադաստրային ծածկագրով 0,7202 հա մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության, 1-ին կարգի վարելահող գործառնական նշանակության հողամասը նախապատվությամբ՝ ուղղակի վաճառքով օտարելուն: Հողամասի վաճառքի գին սահմանել կադաստրային արժեքի չափով՝ 1065000 (մեկ միլիոն վաթսունհինգ հազար) ՀՀ դրամ:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 11, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 089-Ա/:

5. ԼՍԵՑԻՆ - Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը Էդիկ Արշալույսի Մկրտչյանին ուղղակի վաճառքով օտարելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Արտակ Օհանյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ հաշվի առնելով Էդիկ Արշալույսի Մկրտչյանի դիմումը, առաջարկում է տալ համաձայնություն վարձակալության իրավունքով նրան պատկանող, Փամբակ համայնքի Բազում բնակավայրի 06-023-0238-0012 կադաստրային ծածկագրով 0.064 հա մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության, 3-րդ կարգի վարելահող գործառնական նշանակության հողամասը նախապատվությամբ՝ ուղղակի վաճառքով նրան օտարելուն: Հողամասի վաճառքի գին սահմանել կադաստրային արժեքի չափով՝ 72200 (յոթանասուներկու հազար երկու հարյուր) ՀՀ դրամ:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:
Քվեարկությամբ, կողմ՝ 11, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 090-Ա/:

6. ԼՍԵՑԻՆ - Փամբակ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերն աճուրդ վաճառքով օտարելուն, վարձակալության և կառուցապատման իրավունքներով տրամադրելուն համաձայնություն տալու, մեկնարկային գները, աճուրդի և մրցույթի պայմանները հաստատելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Արտակ Օհանյանը: Զեկուցողը ներկայացրեց, որ առաջարկվում է տալ համաձայնություն 26 լոտ հողամասերն աճուրդ վաճառքով օտարելուն, 13 լոտ հողամասերը վարձակալության և 2 լոտ հողամասերը կառուցապատման իրավունքով հատկացնելուն:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:
Քվեարկությամբ, կողմ՝ 10, ձեռնպահ՝ 1 ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 091-Ա/:

7. ԼՍԵՑԻՆ - Փամբակ համայնքի Քարաբերդի ոսկու հանքավայրի կենտրոնական տեղամասում երկրաբանական ուսումնասիրություն կատարելուն նախնական համաձայնություն տրամադրելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ռաիսա Մինասյանը, այնուհետև խոսքը փոխանցեց «Մասիս Փլանթ» ՍՊԸ-ի աշխատակիցներին և իրավաբանին՝ կատարվելիք աշխատանքները ավելի մանրամասն ներկայացնելու նպատակով:

Զեկուցողը ներկայացրեց, որ հաշվի առնելով «Մասիս Փլանթ» ՍՊԸ-ի 04.06.2024թ-ի համայնքի ղեկավարին ուղղված գրությունը՝ հանրային լսումներ կազմակերպելու մասին, ս.թ. հուլիսի 8-ին Քարաբերդ բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում ՀՀ կառավարության 19.11.2014թ.-ի 1325-Ն որոշմամբ սահմանված կարգով անց է կացվել հանրային լսումներ: Հաշվի առնելով լսումների արդյունքները, առաջարկվում է տալ նախնական համաձայնություն «Մասիս Փլանթ» ՍՊԸ-ին, ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի Քարաբերդի ոսկու հանքավայրի Կենտրոնակն տեղամասում պաշարների վերագնահատման համար օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ կատարելու համար: Գործունեության մասին տեղեկատվություն ներկայացրեց «Մասիս Փլանթ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Անահիտ Եսայանը, նա պատասխանեց ավագանու անդամների հարցերին:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:
Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:
Քվեարկությամբ, կողմ՝ 1, ձեռնպահ՝ 2, դեմ՝ 8 որոշումը չընդունվեց:

Օրակարգից դուրս, հայտարարությամբ հանդես եկան Փամբակ խոշորացված համայնքի «Արմատ» նախաձեռնող խմբի անդամները՝ ներկայացնելով ծրագրի շրջանակներում իրականացրած ուսումնասիրության արդյունքում ի հայտ եկած համայնքային խնդիր: «Արմատ» նախաձեռնող խմբի անդամները ի գիտություն ավագանու անդամների ներկայացրեցին, որ արձանագրել են Փամբակ համայնքի Եղեգնուտ բնակավայրում համայնքային գրադարանի բացակայության խնդիր և առաջարկում են ավագանուն հետագա նիստերում քննարկել գրադարանի բացման հարցը:
Ավագանին ընդունեց ի գիտություն:

ՆԻՍՏԻՆ ՆԵՐԿԱ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ _____

ԲՈՋՈՒԿՅԱՆ ԹԻԱՆԱ _____

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ _____

ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ _____

ՀԱԿՈԲՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ _____

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ _____

ՈՍԿԱՆՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ _____

ՊԱՊԻՆՅԱՆ ՊԱՎԼԻԿ _____

ՍԱՐԴԱՐՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ _____

ՍՐԱՊՅԱՆ ԱՐՇԱԿ _____

ՔՈՉԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՂ՝ _____ Ռ. ՄԻՆԱՍՅԱՆ